ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/23

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Պետրոսյանի (իրավաբանական անձանց պետական գրանցման համար՝ 03Ա088945)

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 03.03.2020թ.)

«Ջրային կառույցների» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ղազարյանի (լիազորագիր տրված՝ 04.03.2020թ.)

քննելով «Ջրային կառույցների» ՓԲԸ-ի կարիքների համար «Պոմպերի վերանորոգման և պահպանման» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 28.02.2020թ. ներկայացված (02.03.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/23 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն 28.02.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Ջրային Կառույցների» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Պոմպերի վերանորոգման և պահպանման» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Սույն ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2020թ. մարտի 03-ը, ժամը 11:30-ն:

Ընթացակարգի առարկան է հանդիսանում «Ջրային Կառույցների» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Պոմպերի վերանորոգման և պահպանման»ձեռքբերումը (հետայսու նաև՝ ծառայություն), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ

Համաձայն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի», սահմանվել է ծառայությունների հետևյալ տեխնիկական բնութագիր՝ Հասցեն՝ Կատարողի սպասարկման տարածքում, որը պետք է գտնվի ք. Երևանում կամ ք. Երևանից՝ առավելագույնը 20 կմ հեռավորության վրա,

1. Կատարողը պետք է ունենա՝

1.1. Անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ,

1.2.Փոխարինման ենթակա մասերի, ապրանքների, դետալների, սարք-սարքավորումների և նյութերի (այսուհետ՝ Պահեստամասեր) կամ վերանորոգման համար պահեստ կամ խանութ՝ սպասարկման տարածքում,

1.3. Վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը:

2. Պոմպը սպասարկման վայր տեղափոխվելուց հետո (տեղափոխումը իրականացվում է Պատվիրատուի կողմից) պետք է սպասարկվի արտահերթ՝ տեղափոխվելու պահից առավելագույնը 30 (երեսուն) րոպե հետո, որից անմիջապես հետո Կատարողը մեկ ժամվա ընթացքում պետք է ապահովի պոմպի ախտորոշումը՝ տրամադրելով պոմպի վրա իրականացվելիք աշխատանքների և դրանց կատարման ժամկետների մասին տեղեկանք (տեղեկանքում ներառվող ծառայությունները պետք է համապատասխանեն Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված գնացանկին, ընդ որում՝ աշխատանքների կատարման

ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 24 ժամից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք հիմնավորում ծառայությունների մատուցումը նշված ժամանակահատվածում անհնարին լինելու մասին, որի մասով Պատվիրատուի կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ:

3. Պոմպը սպասարկման վայր տեղափոխվելուց հետո առավելագույնը 1 (մեկ) ժամ 30 (երեսուն) րոպե հետո պետք է սկսվի պոմպի վերանորոգման գործընթացը.

4. Կատարողը պետք է կարողանա միաժամանակ սպասարկել առնվազն 2 (երկու) պոմպ:

5. Ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում:

6. Կատարողը պետք է ունենա պոմպերի պահպանման ապահով վայր:

7. Փոխարինված պահեստամասերը պահանջի դեպքում մեկօրյա ժամկետում պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին:

8.Ծառայությունները պետք է մատուցվեն կից ներկայացված գնացուցակին և տեխնիկական բնութագրին համապատասխան:

9. Երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի Ծառայությունը ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) ամիսը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Ծառայության թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները, ընդ որում՝ այն տողերի մասով որոնց համար երաշխիքային ժամկետ հնարավոր չէ սահմանել պետք է ներկայացվի համապատասխան տեղեկանք հիմնավորում:

10. Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում կամ ք. Երևանից առավելագույնը 20 կմ հեռավորության վրա

11. Պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Ընկերությունը գտնում է, որ ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սույն ընթացակարգի հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի պահանջների խախտում, մասնավորապես.

«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնում պահանջվել է՝

- ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում կամ ք. Երևանից առավելագույնը 20 կմ հեռավորության վրա,
- ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00,
- պոմպը սպասարկման վայր տեղափոխվելուց հետո առավելագույնը 1 (մեկ) ժամ 30 (երեսուն) րոպե հետո պետք է սկսվի պոմպի վերանորոգման գործընթացը,

- աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 24 ժամից ...:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի ծառայությունների մատուցման համար պահանջվում է, որ ծառայությունները պետք է մատուցվեն Երևան քաղաքի վարչական տարածքում կամ ք. Երևանից առավելագույնը 20 կմ հեռավորության վրա և դեռ ավելին՝ պոմպի սպասարկումը կատարել 1 ժամ 30 րոպեում: Ընկերությունը գտնում է, որ օբյեկտիվորեն հիմնավորված չէ և համարժեք չէ այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ընկերությունը նշել է, որ նույնատիպ խնդրի առաջ է կանգնում նաև, երբ ուսումնասիրում է «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնի՝ մյուս պահանջները, օրինակ՝ աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 24 ժամից և ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00:

Այսպես՝ անընդունելի է Ընթացակարգի հրավերով ամրագրված հետևյալ արտահայտությունը «ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00», քանզի եթե մասնակիցը ունի հնարավորություն և ընդունակություն ծառայություններն իրականացնել նաև ժամը 18:00-ից հետո, ապա ինչով է պայմանավորված և հիմնավորված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի այս պահանջը, որը Ընկերության կարծիքով նորից օբյեկտիվորեն հիմնավորված չէ:

Ընկերությունը գտնում է, որ Հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժինը՝ պետք է վերանայվի և համապատասխանեցվի գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Օրենքի 29-րդ հոդվածը նախատեսում է հրավերում փոփոխություններ կատարելու հնարավորությունը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող

հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով, որ Ընթացակարգով հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ, ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. պարտավորեցնել ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

կամ

2. պարտավորեցնել ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնում՝ կատարել համապատասխան փոփոխություններ՝ Հրավերը համապատասխանեցնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Ընկերությունը ի լրումն ներկայացված բողոքի հայտնել է, որ «Ջրային Կառույցների» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար՝ պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը խտրական է, չի նպաստում մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը, չհիմնավորված խոչընդոտներ է առաջացնում մասնակիցների համար, ինչպես նաև Ընկերության կարծիքով, օբյեկտիվորեն հիմնավորված չէ:

Մասնավորապես.

«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնում պահանջվել է՝

1.Ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում կամ ք. Երևանից առավելագույնը 20 կմ հեռավորության վրա:

Ընկերությունը նշել է, որ նման պահանջ սահմանելով՝ Պատվիրատուն հնարավոր մասնակիցների շրջանակից դուրս է մղում բոլոր այն ընկերություններին, որոնց սպասարկման կետերը գտնվում են ք. Երևանից 20 կմ հեռավորությունից ավելի, օրինակ 22 կմ: Ընդ որում, նման պահանջը պատվիրատուի հիմնավորվում է այն հանգամանքով, որ «Ջրային Կառույցների» ՓԲԸ-ն բոլոր տեսակի փոխադրումների համար փոխադրող

ընկերության հետ կնքել է պայմանագիր, որով սահմանվել է փոխադրումը առավելագույնը 20 կմ շարավիղ: Մինչդեռ «Ջրային Կառույցների» ՓԲԸ-ին սպասարկող տրանսպորտային ընկերության հետ կնքված պայմանագրի պայմանները նաև այս մրցույթի վրա տարածելը, ոչ իրավաչափ է, քանի որ նման եղանակով մրցույթից դուրս են մղվում Երևանից 20 կմ. հեռավորության վրա գտնվող վայրերում սպասարկման կետեր ունեցող բոլոր ընկերությունները: Մինչդեռ նախ, հենց մասնակիցը սեփական ուժերով կարող է կազմակերպել պոմպերի տեղափոխումը, քանի որ պոմպը ծավալային և քաշային առումով (76 կգ) փոքր առարկա է, և տեղափոխումը հնարավոր է կազմակերպել սովորական ավտոմեքենայով: Ի ապացույց վերոհիշյալ պնդմանը՝ կից ներկայացվում են պոմբի լուսանկարները:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է նկատի ունենալ նաև մի կարևոր հանգամանք. նախորդ տարիների նույն մրցույթների շրջանակներում երբեք չի եղել սահմանված պահանջ առ այն, որ ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում կամ ք. Երևանից առավելագույնը 20 կմ հեռավորության վրա: Եվ հանկարծ վերոհիշյալ մրցույթին «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 2019թ. հայտ ներկայացնելուց հետո, արդեն 2020թ. նույն մրցույթի համար սույն բողոքով վիճարկվող հրավերում ավելացվեց վերոհիշյալ պահանջը: Բանն այն է, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն գտնվում է ք. Արմավիրում, և հրավերում նման պահանջ նախատեսվելու (ավելացվելու) դեպքում, բնականաբար, ՍՊԸ-ն զրկվում է մրցույթին հայտ տալու հնարավորությունից: Ընկերությունը խնդրում ենք նկատի ունենալ նշված կարևոր փաստարկը:

2. Ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00:

Ընկերությունը գտնում է, որ այս պահանջը նույնպես խտրական է, քանի որ սահմանափակում է ծառայություն մատուցողի աշխատանքների կազմակերպման բնականոն ընթացքը: Այն պայմաններում, երբ կատարողը 1,5 ժամվա ընթացքում պետք է գնահատի վերանորոգման ենթակա պոմպը, իսկ դրանից հետո 24 ժամվա ընթացքում ավարտի վերանորոգման գործընթացը, առնվազն խոչընդոտ է մասնակցին ստիպել աշխատանքային պրոցեսը կազմակերպել մինչև 18:00՝ թույլ չտալով վերջինիս վերանորոգման գործընթացը երկու կամ երեք աշխատանքային հերթերով կազմակերպելը: Ընկերությունը գտնում է, որ այս պահանջը պետք է վերացվի: Ընկերությունը նշել է, որ ինչ վերաբերվում է վերանորոգման աշխատանքների

նկատմամբ պատվիրատուի իրականացվելիք հսկողությանը, ինչով Պատվիրատուն նիստի ժամանակ բացատրեց վերոհիշյալ պահանջի նախատեսումը, ապա հայտնել է, որ վերանորոգված պոմբերի որակը երաշխավորվում է հրավերով սահմանված երաշխիքային ժամկետով, ինչն, ինքնին, արդեն բավարար երաշխիք է կատարված աշխատանքների որակը ավահովելու համար:

3. պոմպը սպասարկման վայր տեղափոխվելուց հետո առավելագույնը 1 (մեկ) ժամ 30 (երեսուն) րոպե հետո պետք է սկսվի պոմպի վերանորոգման գործընթացը,

4. աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 24 ժամից ...:

Ընկերությունը գտնում է, որ աշխատանքների համար սահմանված ժամկետները խելամիտ չեն և չեն բխում Պատվիրատուի համար առկա ծայրահեղ կարիքից: Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ համապատասխան տեղեկանք ներկայացնելու դեպքում պատվիրատուն կարող է նշված ժամկետը երկարաձգել, ապա այս կապակցությամբ Ընկերությունը հայտնել է, որ նշվածը Պատվիրատուի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, ինչի պայմաններում Պատվիրատուն կարող է սուբյեկտիվորեն կատարողի ներկայացված տեղեկանքը՝ աշխատանքների կատարման համար ավելի երկար ժամանակ պահանջելու մասով, չհամարել հիմնավոր և չբավարարել պահանջը: Իսկ վերոհիշյալը ոչ միայն կհանգեցնի պայմանագրի միակողմանի լուծմանը, այլ նաև ընկերության համար կստեղծի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգ:

Ընկերությունը հայտնել է, որ հրավերում առկա են այլ բացթողումներ՝ կապված պայմանագիրն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո ծառայությունների մատուցման ժամկետի սկիզբ հաշվարկելու, գնային առաջարկի հետ կապված ոչ հստակ կարգավորումների հետ և այլն:

Ընկերությունը գտնում է, որ նման բովանդակությամբ մրցույթի հրավերը տարիներ ի վեր հանգեցրել է մրցակցության սկզբունքի խախտմանը, ինչի արդյունքում մրցույթին մասնակցել է միևնույն մասնակիցը, ինչն էլ իր հերթին վտանգավոր է պետական բյուջեի միջոցների ոչ ռացիոնալ օգտագործմամբ:

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.03.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. «Ջրային կառույցների» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Ջրային կառույցների» ՓԲԸ-ն «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 28.02.2020թ. ներկայացված բողոքի վերաբերյալ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

1. Ծառայությունների տեխնիկական բնութագրի 10-րդ կետով սահմանված է, որ բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում կամ ք. Երևանից առավելագույնը 20 կմ հեռավորության վրա, քանի որ պոմպերի և այլ բեռի տեղափոխման ծառայությունների ձեռքբերման նպատակով «Ջրային Կառույցներ» ՓԲԸ-ի և այդ նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի միջև 21.02.2020թ կնքվել է համապատասխան պայմանագիր, համաձայն որի բեռի տեղափոխման համար սահմանված չափման միավորը երթն է, իսկ մեկ երթը՝ համաձայն նույն պայմանագրի տեխնիկական բնութագրի կազմում է առավելագույնը 20կմ: Ըստ բողոքաբերի նշվածը օբյեկտիվորեն հիմնավորված չէ և համարժեք չէ այն կարիքին, որի համար կատարվում է գնումը, գտնում եմ որ բողոքաբերի նշված պնդումը առնվազն անհիմն է, քանզի կից ներկայացվող 21.02.2020 թվականին կնքված պայմանագիրը արդեն իսկ վկայում է վերոհիշյալ պայմանի սահմանման հիմնավորվածությունը: Եթե «Ջրային Կառույցներ» ՓԲԸ-ն արդեն իսկ կնքված պայմանագրով ստանում է բեռի տեղափոխման ծառայություն կրկին անգամ այդ մասով սույն գնման ընթացակարգի շրջանակում ծառայություն ստանալը կլինի չհիմնավորված ծախս, իսկ բեռի տեղափոխման վերաբերյալ պայմանագիր ունենալու հանգամանքը ինքնին ենթադրում է այդ մասով կրկին անգամ Պատվիրատուի մոտ կարիքը չլինելու հանգամանքը: Եվ այս ամենով պայմանավորված Պատվիրատուն ինքն է գնահատում իր կարիքները և հաշվի առնելով, որ արդեն իսկ առկա է բեռի տեղափոխման վերաբերյալ կնքված պայմանագիր, որի չափման միավորը երթն է՝ առավելագույնը 20 կմ, ապա սույն գնման ընթացակարգում «ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում կամ ք. Երևանից առավելագույնը 20 կմ հեռավորության վրա» պահանջը առավել քան հիմնավորված է և բխում է Պատվիրատուի պահանջից:

2. Ծառայությունների տեխնիկական բնութագրի 3-րդ կետով սահմանված է, որ պոմպը սպասարկման վայր տեղափոխվելուց հետո առավելագույնը 1 (մեկ) ժամ 30

(երեսուն) րոպե հետո պետք է սկսվի պոմպի վերանորոգման գործընթացը, այլ ոչ թե՝ ինչպես բողոքաբերն է ներկայացնում պոմպի սպասարկումը պետք է իրականացվի 1 ժամ 30 րոպեում: Փաստերի խեղաթյուրումը իր իսկ կողմից հենց բողոքաբերի համար ստեղծել է մոլորություն և գնման առարկայի թյուրընկալում:

3. Բողոքում որպես անհամապատասխանություն նշված է, որ աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 24 ժամից, սակայն նույն բողոքի սկզբնամասում զետեղված ծառայությունների տեխնիկական բնութագրի 2-րդ կետով սահմանված դրույթը ամբողջական կարդալուց հետո պարզ է դառնում, որ այդ մասով առկա է բացառություն, համաձայն որի, եթե 24 ժամում հնարավոր չէ իրականացնել վերանորոգումը, ապա Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք հիմնավորում ծառայությունների մատուցումը նշված ժամանակահատվածում անհնարին լինելու մասին և այդ մասով Պատվիրատուի կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ: Այս մասով նույնպես բողոքաբերը ճիշտ չէ պատկերացրել տեխնիկական բնութագիրը, ավելին 24 ժամ նախատեսվել է այն պատճառով, որ վնասված պոմպերը հնարավորիս արագ պետք է վերականգնվեն և Պատվիրատուի մոտ առկա է շտապ ծառայություն ստանալու կարիք:

4. Ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի 5-րդ կետով սահմանված է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում, ինչը որպես անհամապատասխանություն ևս ներառված է բողոքում, սույն կետի սահմանումը միտված է եղել աշխատանքային օրերից և ժամերից դուրս Պատվիրատուի կողմից ծառայությունների մատուցման պահանջի սահմանափակմանը, որը նպատակ է հետապնդում Պատվիրատուի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքին հետևելու, վերանորոգման ենթակա պոմպերը տեղափոխելու աշխատանքները կազմակերպելու, քանզի դրանք պայմանավորված են նաև Պատվիրատուի աշխատանքային ժամերով:

Նշվածից բացի պետք է արձանագրել նաև հետևյալը՝ բողոքաբերը առանձին կետով իր բողոքում առանձնացրել է բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները կետը, որը իրենից պետք է ենթադրի բողոքով պարզաբանման ենթակա հարցերի դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծություն և գործով առկա փաստերի համադրություն: Սակայն, բողոքաբերը մատնանշելով որոշակի իրավական նորմեր, դրանց վերլուծության արդյունքում հստակ չի նշել գործով առկա, որ փաստական

հիմքերն են թույլ տվել վկայակոչված իրավական նորմերի խախտումներ, այլ միայն վերացական մատնանշել է իր իսկ գնահատմամբ օբյեկտիվորեն հիմնավորված չլինելը, գնման կարիքին չհամապատասխանելը, չհիմնավորված խոչընդոտների առաջացումը, միասնական կանոնների չպահպանումը, համաչափության խախտումը, մասնակիցների շրջանակի ընդլայնմանը չնպաստելը և հայտը բավարար ճշտությամբ չներկայացնելը: Գտնում եմ, որ բողոքաբերը եթե կատարեր իր կողմից վկայակոչված իրավական նորմերի վերլուծություն, ապա կհանգեր այն հետևության, որ միասնական կանոնների չպահպանման, համաչափության խախտման, մասնակիցների շրջանակի ընլայնմանը չնպաստելու մեկնաբանությունը օրենսդիրը գնահատել և ամրագրել է այլ տրամաբանության մեջ, որը առկա չէ սույն բողոքում: Իսկ օբյեկտիվորեն հիմնավորված, կարիքին համապատասխան լինելու և հայտը բավարար ճշտությամբ ներկայացված լինելու դիրքորոշմանը կհանգեր հայտի մանրամասն ուսումնասիրման և իր իսկ կողմից դրանում տեղ գտած փաստերի չխեղաթուրման արդյունքում, որը հենց արձանագրվել է ներկայացված բողոքում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնելով վերոգրյալը մերժել բողոքը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.03.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Ջրային կառույցների» ՓԲԸ-ի կարիքների համար «Պոմպերի վերանորոգման և պահպանման» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը www.gnumner.am կայքում հրապարակվել է 25.02.2020թ.:

2. Ընթացակարգի հրավերի տեքստը հաստատվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2020թ. թիվ 2 որոշմամբ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 28.02.2020թ. ներկայացված բողոքը, «ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի հրավերը, «Ջրային կառույցների» ՓԲԸ-ի գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության համաձայն՝ կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվեն ապրանքների և ծառայությունների դեպքում առնվազն 20, իսկ աշխատանքների դեպքում՝ առնվազն 45 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն

ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

«Ջրային կառույցների» ՓԲԸ-ի կարիքների համար «Պոմպերի վերանորոգման և պահպանման» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերի տեքստը հաստատվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2020թ. թիվ 2 որոշմամբ:

Հրավերով հաստատվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

ՀՀ դրամ

Ծառայության						
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը
1	50511100	պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	դրամ	1	Կատարողի սպասարկման տարածքում, որը պետք է գտնվի ք. Երևանում կամ ք. Երևանից առավելագույնը 20 կմ հեռավորության վրա	Կողմերի միջև Պայմանագրի 7.15 կետով նախատեսված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ***31.12.2020-ը*** ներառյալ, ըստ Պատվիրատուի պահանջի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Կատարողը պետք է ունենա՝

1.1 Անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ,

1.2 Փոխարինման ենթակա մասերի, ապրանքների, դետալների, սարք-սարքավորումների և նյութերի (այսուհետ՝ Պահեստամասեր) կամ վերանորոգման համար պահեստ կամ խանութ՝ սպասարկման տարածքում,

1.3 վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը,

2. Պոմպը սպասարկման վայր տեղափոխվելուց հետո (տեղափոխումը իրականացվում է Պատվիրատուի կողմից) պետք է սպասարկվի արտահերթ՝ տեղափոխվելու պահից առավելագույնը 30(երեսուն) րոպե հետո, որից անմիջապես հետո Կատարողը մեկ ժամվա ընթացքում պետք է ապահովի պոմպի ախտորոշումը՝ տրամադրելով պոմպի վրա իրականացվելիք աշխատանքների և դրանց կատարման ժամկետների մասին տեղեկանք (տեղեկանքում ներառվող ծառայությունները պետք է համապատասխանեն Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված գնացանկին, ընդ որում՝ ***աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 24ժամից***, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք հիմնավորում ծառայությունների մատուցումը նշված ժամանակահատվածում անհնարին լինելու մասին, որի մասով Պատվիրատուի կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ:

3. Պոմպը սպասարկման վայր տեղափոխվելուց հետո առավելագույնը 1 (մեկ) ժամ 30(երեսուն) րոպե հետո պետք է սկսվի պոմպի վերանորոգման գործընթացը.

4. Կատարողը պետք է կարողանա միաժամանակ սպասարկել առնվազն 2 (երկու) պոմպ:

5. ***Ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում:***

6. Կատարողը պետք է ունենա պոմպերի պահպանման ապահով վայր:

7. Փոխարինված պահեստամասերը պահանջի դեպքում մեկօրյա ժամկետում պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին:

8. ***Ծառայությունները պետք է մատուցվեն կից ներկայացված գնացուցակին*** և տեխնիկական բնութագրին համապատասխան:

9. Երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի Ծառայությունը ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) ամիսը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Ծառայության թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները, ընդ որում՝ այն տողերի մասով որոնց համար երաշխիքային ժամկետ հնարավոր չէ սահմանել պետք է ներկայացվի համապատասխան տեղեկանք հիմնավորում:

10. Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում կամ ք. Երևանից առավելագույնը 20 կմ հեռավորության վրա

11. Պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված

ԳՆԱՑՈՒՑԱԿ (միավորի գներով)

N	առանձին տեսակի ծառայությունների անվանումները	չափման միավորը	Միավորի գինը /ՀՀ դրամ/
1	**ԷՑՎ 8-25-100 11կվտ խորքային պոմպի համար՝**		
	Խորքային պոմպի էլ.շառժիչի փաթույթների դուրս բերում, փորակների մաքրում, փաթույթների պատրաստում (ՊՎԴՊ-2 ,8կգ), տեղադրում, սխեմայի պատրաստում, հավաքում, լաքապատում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	100000
	Կրունկի փոխարինում(ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	10000
	Կրնկալի փոխարինում(ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	8000
	Բանվորական անիվի փոխարինում(ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	10000
	Շարժիչի առանցքակալի փոխարինում(ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	5000
	Պոմպի առանցքակալի փոխարինում(ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	5000
	Ականոցի փոխարինում շարժիչի (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	6000
	Ականոցի փոխարինում պոմպի (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	7000
	Սպատորի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	30000
	Ռոտորի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	30000
	Պոմպի լիսեռի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	15000
	Իրանի ծածկոց փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	5000
	Զտացուցիչ օղակի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	5000
	Ռոտորի վերանորոգում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	15000
	Պոմպի լիսեռի վերանորոգում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	15000
			266000
2	**ԷՑՎ 6-16-100 6.3կվտ խորքային պոմպի համար՝**		
	Խորքային պոմպի էլ.շառժիչի փաթույթների դուրս բերում, փորակների մաքրում,փաթույթների (ՊՎԴՊ-1.6 ,11կգ) պատրաստում, տեղադրում, սխեմայի պատրաստում, հավաքում, լաքապատում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	90000
	Կրունկի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	6000
	Կրնկալի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	8000
	Բանվորական անիվի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	10000
	Շարժիչի առանցքակալի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	5000
	Պոմպի առանցքակալի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	5000
	Ականոցի փոխարինում շարժիչի (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	5000
	Ականոցի փոխարինում պոմպի (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	5000
	Սպատորի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	25000
	Ռոտորի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	30000
	Պոմպի լիսեռի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	15000
	Իրանի ծածկոց փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	5000
	Զտացուցիչ օղակի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	5000
	Ռոտորի վերանորոգում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	15000
	Պոմպի լիսեռի վերանորոգում (ներառյալ ապրանքները և նյութերը)	հատ	15000
			244000
3	**ԷՑՎ 10-120-60 32կվտ խորքային պոմպի համար՝**		
	Խորքային պոմպի էլ.շառժիչի փաթույթների դուրս բերում, փորակների մաքրում, փաթույթներ	հատ	150000

	(ՊՎԴՊ-3.75,18 կգ պատրաստում, տեղադրում, սխեմայի պատրաստում, հավաքում, լաքապատում (ներառյալ ապրանքները և նյութերը)		
	Կրունկի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*10000*
	Կրնկալի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*10000*
	Բանվորական անիվի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*12000*
	Շարժիչի առանցքակալի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*8000*
	Պոմպի առանցքակալի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*8000*
	Ականոցի փոխարինում շարժիչի (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*8000*
	Ականոցի փոխարինում պոմպի (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*7000*
	Սպատորի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*40000*
	Ռոտորի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*50000*
	Պոմպի լիսեռի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*30000*
	Իրանի ծածկոց փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*5000*
	Զտացուցիչ օղակի փոխարինում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*5000*
	Ռոտորի վերանորոգում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*15000*
	Պոմպի լիսեռի վերանորոգում (ներառյալ ապրանքները և նյութերը)	*հատ*	*15000*
			373000
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԻԱՎՈՐԻ ԳՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ		***883000***

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, **քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:***

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերով հաստատված Հավելված 1-ը, գտնում եմ, որ Ընթացակարգի հրավերի ծառայությունների տեխնիկական բնութագրում նշված ծառայության մատուցման վերջնաժամկետն անհրաժեշտ է համապատասխանեցնել նույն հավելվածով սահմանված ծառայության մատուցման վերջնաժամկետին, քանի որ ծառայության մատուցման վերջնաժամկետ մի դեպքում նշված է **31.12.2020թ.**, մեկ այլ դեպքում՝ **25.12.2020թ.**:

Ընթացակարգի հրավերի ծառայությունների տեխնիկական բնութագրում որպես ծառայության մատուցման ժամկետ սահմանվել է «Կողմերի միջև Պայմանագրի 7.15 կետով նախատեսված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.12.2020-ը ներառյալ, ըստ Պատվիրատուի պահանջի», չեն պահպանվել Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերությամբ սահմանված պահանջը, որի համաձայն՝ ծառայությունների մատուցման առաջին փուլի համար անհրաժեշտ է սահմանել առնվազն 20 օրացուցային օր ժամկետ, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված:

Ընթացակարգի հրավերի ծառայությունների տեխնիկական բնութագրում 5-րդ կետով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում:

Տվյալ դեպքում գտնում եմ, որ Պատվիրատուն, նման ժամանակային պահանջ սահմանելով, սահմանափակում է Կատարողի՝ որպես ազատ տնտեսվարողի կողմից

ծառայությունների մատուցման արդյունավետ կազմակերպման և իրականացման ընթացքը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ում՝ գնային առաջարկում և ծառայությունների տեխնիկական բնութագրի 8-րդ կետով համապատասխանաբար սահմանված ձևակերպումները՝ «Գնային առաջարկում պետք է լրացվի պայմանագրի 1-ին հավելվածում ներկայացված գնացուցակի միավորի գների հանրագումարը...», «Ծառայությունները պետք է մատուցվեն կից ներկայացված գնացուցակին և տեխնիկական բնութագրին համապատասխան» առաջացնում են տարընկալում, ուստի անհրաժեշտ է ձևակերպումները ճշգտրել:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի բողոքը վերոթվակված մասերով ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված հետևյալ պնդումներին՝

- «Ընթացակարգի ծառայությունների մատուցման համար պահանջվում է, որ ծառայությունները պետք է մատուցվեն Երևան քաղաքի վարչական տարածքում կամ ք. Երևանից առավելագույնը 20 կմ հեռավորության վրա և դեռ ավելին՝ պոմպի սպասարկումը կատարել 1 ժամ 30 րոպեում: Ընկերությունը գտնում է, որ օբյեկտիվորեն հիմնավորված չէ և համարժեք չէ այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:
- պոմպը սպասարկման վայր տեղափոխվելուց հետո առավելագույնը 1 (մեկ) ժամ 30 (երեսուն) րոպե հետո պետք է սկսվի պոմպի վերանորոգման գործընթացը,
- աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 24 ժամից ...:

Ընկերությունը գտնում է, որ աշխատանքների համար սահմանված ժամկետները խելամիտ չեն և չեն բխում Պատվիրատուի համար առկա ծայրահեղ կարիքից», ապա սույն մասերով գտնում եմ, որ նշված պահանջների սահմանումը չի խախտում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթը:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն

ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ ծառայությունների տեխնիկական բնութագիրը սույն մասերով չի հակասում Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին և հետևաբար բողոքը սույն մասերով անհիմն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից 28.02.2020թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգի հրավերում կատարել սույն որոշման մեջ նշված փոփոխությունները.
2. «ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը չկայացած հայտարարելուն պարտավորեցնելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**